Երկրորդ ընթերցում
ՆԱԽԱԳԻԾ

Կ-938[2]-21.01.2016,25.02.2016-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մարտի 5-ի ՀՕ-309 օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներն ընդգրկվում են լիազորված մարմնի կազմում, համարվում են մշտական պատրաստության ստորաբաժանումներ եւ նախատեսված են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջար-կության հեղինակ	Առաջարկության բովանդակությունը	Եզրակա-ցություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ Աժ պատ-գամա-վոր Գ, Մելիքյան	«Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով՝		
	1 Նախագիծը լրացնել նոր 9-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «**Հոդված 9.** Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում «30» թիվը փոխարինել «40» թվով:»	1. Ընդունվել է մասամբ	1. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մինչև 30 տարեկան տարիքային շեմը բարձրացնելու նպատակով Նախագիծը լրացվել է նոր 9-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ «***Հոդված 9.*** **Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «30» թիվը փոխարինել «35» թվով:** »
	2 10-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Օրենքի 32-րդ հոդվածի 4.9-րդ մասից հանել «, առնվազն միջնակարգ կրթություն ունեցող» բառերը:»	2. Ընդունվել է մասամբ	2. Նախագծի 11-րդ հոդվածը լրացվել է նոր 3-րդ մասով «**3. 9-րդ մասը «առնվազն միջնակարգ կրթություն ունեցող» բառերից հետո լրացնել «(բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժա-նումներում ծառայության ընդունվողների)» բառերը.** »